Հայաստանում առաջին անվճար գյուղատնտեսական շուկան՝ Eagro.am

Առաջին անգամ Հայաստանում, ինչպես նաև ողջ տարածաշրջանում, գործարկվել է գյուղատնտեսական ծրագիր, որը լիարժեքորեն օգտագործում է ժամանակակից տեխնոլոգիաների առաջարկած բոլոր հնարավորությունները՝ հօգուտ գյուղացիների և անհատ ձեռներեցների: Eagro.am գյուղատնտեսական ծրագիրն ընդարձակ ինտերնետային շուկա է, որտեղ գյուղացիները կարող են վաճառքի հանել իրենց գյուղմթերքը, իսկ գնորդը արագ գտնել իրեն անհրաժեշտ գյուղատնտեսական ապրանքները:

ՇՈՒԿԱ՝ ՀԱՄԱԿԱՐԳՉՈՎ
ԵՎ ԲՑՑԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍՈՎ



Eagro.am-ը ստեղծել է Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի հայաստանյան գրասենյակը: Նման կայքեր մեծ հաջողությամբ գործում են ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Հարավային Կորեայում, աֆրիկյան մի շարք երկրներում: Վիճակագրական տվյալներով, նման կայքերը հնարավորություն են տալիս օգտատերերին 20-60 տոկոսով ավելացնել իրենց եկամուտը և կրճատել ծախսերը:

Մինչ այսօր գյուղմթերք վաճառողն ու գնորդը Հայաստանում իրար անմիջականորեն հանդիպելու երկու հիմնական տարբերակ ունեին: Հանդիպման առաջին տարբերակը ֆերմերային կամ այլ շուկաներն են, որտեղ հասնելու համար նրանք ծախսում են բեռնափոխադրման կամ տրանսպորտի գումարներ, կորցնում բազմաթիվ ժամեր, և ոչ միշտ են հասնում ցանկալի արդյունքների: Երկրորդ տարբերակը գնորդի, հիմնականում արտադրող ընկերությունների, գյուղական համայնքներում այգուց-այգի, կամ տանից-տուն այցելելն է, իրենց անհրաժեշտ քանակի ու որակի գյուղմթերք գնելու համար՝ կրկին գումարի ու ժամանակի բավականին մեծ ծախսեր կատարելով: Կա անշուշտ միջնորդի միջոցով առքուվաճառքի տարբերակը, սակայն փորձը ցույց է տալիս, որ հաճախ միջնորդավճարները չափազանց բարձր են և բացասականորեն են ազդում ինչպես ֆերմերի, այնպես էլ գնորդի բյուջեի վրա:

Ավելին, կան բազմաթիվ այլ մեծ ու փոքր խնդիրներ, որոնք մինչ այժմ լուծում չեն ունեցել: Օրինակ, բազմաթիվ գյուղացիների ծանոթ կլինի այն իրավիճակը, երբ նույն կամ հարակից մարզերից գյուղացիներն իրար <գտնում են> և ապրանքներ փոխանակում Երևանյան շուկաներում, մինչդեռ ցանկալի կլիներ հանդիպել երկուսին էլ ավելի մոտ տարածքում և չծախսել ավելորդ ժամանակ ու գումար Երևան հասնելու համար: Կան բազմաթիվ դեպքեր, երբ հատուկ տեսակի գյուղմթերք արտադրող ֆերմերը չի կարողանում իրացնել իր ապրանքը փոքր քանակի պատճառով, մինչդեռ Հայաստանի տարբեր մասերում ցրված են նույն

գյուղմթերքն արտադրող այլ ֆերմերներ, և նրանց իրար ճանաչելն ու միանալը թույլ կտար ավելի հեշտությամբ ու ավելի լավ գնով իրացնել իրենց արտադրանքը: Նմանապես, լինում են իրավիճակներ, երբ կով, ձի կամ այլ կենդանի գնելու համար գնորդը իր և հարակից գյուղերում հարցուփորձ է անում, ու սպասում, թե երբ իրեն տեղեկություն կտան իր ուզած կենդանում վաճառքի մասին, ի վիճակի չլինելով արագորեն գտնել ինչն իրեն անհրաժեշտ է:

Այժմ, eagro.am կայքում անվճար գրանցվելով, ֆերմերն ու գնորդը կարող են միմյանց հետ կապ հաստատել առանց միջնորդի, և առանց տրանսպորտի գումար ու ժամանակ ծախսելու: Ցանկացած ապրանքատեսակ գտնելու համար պարզապես պետք է մտնել կայք, գտնել հայտարարությունները, բջջային հեռախոսով զանգահարել վաճառողին, պայմանավորվել գնի, փոխադրամիջոցի և այլնի մասին, և հանդիպել առքուվաճառք իրականացնելու համար:

Ավելին, հատուկ նրանց համար, ովքեր հնարավորություն չունեն օգտվելու համակարգչից, eagro.am-ը հասանելի է նաև նույնիսկ ամենապարզ բջջային հեռախոսի միջոցով: Բավական է պարզապես մեկ անգամ գրանցվել կայքում, դուրս գրել բջջային կոդերը, և ուղարկել կայքի կարճ համարին բջջային հաղորդագրություն համապատասխան կոդերով: Վաճառողը կարող է բջջային հեռախոսով հայտարարություններ տեղադրել, գնորդը կարող է նույն կերպ ստանալ իրեն հետաքրքրող հայտարարությունները: Ավելին նույն բջջային հեռախոսով նրանք կարող են օգտվել eagro.am-ի առաջարկած բազմաթիվ այլ ծառայություններից, իսկ այդ ծառայությունները քիչ չեն:

Նախ, eagro.am-ն առաջարկում է բացարձակ անվճար խորհրդատվություն: Սա հնարավոր է դարձել ԳԱՀԿ-ի և ԳԱՄԿ-երի շնորհիվ, որոնք ամենայն պատրաստակամությամբ իրենց մասնագիտական ներուժը կօգտագործեն ֆերմերներին ու անասնապահներին մասնագիտական խորհրդատվություն մատուցելու համար: Պարզապես պետք է eagro.am կայքում գրել հուզող հարցը և շատ արագ ստանալ խորհուրդներ հարցի լուծման համար: Նույն կերպ հարցը կարելի է ուղարկել ու ստանալ խորհրդատվություն բջջային հեռախոսով:

Կայքում կարելի է գտնել նաև բեռնափոխադրման և գյուղտեխնիկայի ծառայությունների հայտարարություններ, եղանակի տեսություն, գյուղատնտեսական նորություններ, տարբեր ապրանքների միջին գները: Օրեցօր eagro.am-ը համալրվում է նոր ծառայություններով ու հնարավորություններով, և բոլորն անվճար: Չնայած ծրագիրը գործարկվել է միայն այս տարվա հունիսին, այն արդեն ունի բազմաթիվ օգտատերեր և մի շարք ապրանքատեսակներ հայտարարված են վաճառքի:

Մեր տարածաշրջանում սա առաջին նման կայքն է, և Հայաստանում հաջողության հասնելու դեպքում կտարածվի նաև Վրաստան, Ռուսաստան և այլ երկրներ՝ հայաստանյան գյուղմթերքն արտերկրյա գնորդների շրջանում առավել հասանելի դարձնելու համար:

Հայաստանի գյուղատնտեսական ոլորտն ապահովում է ընդհանուր զբաղվածության ավելի քան 45 տոկոսը, հանդիսանալով կարևորագույն սոցիալական և տնտեսական գործոն երկրի զարգացման գործում: Գյուղանտեսության խոշորագույն խնդիրներից, սակայն, շարունակում են մնալ գյուղատնտեսական մթերքների իրացումը, գյուղտեխնիկայի հասանելիությունը և արդյունավետ տնտեսվարման արդի հմտությունների պակասը:

Պարբերաբար ջանքեր են գործադրվում այս խնդիրների լուծման ուղղությամբ ինչպես կառավարության, այնպես էլ տեղական ու միջազգային կազմակերպությունների կողմից: Ստեղծվում են ֆերմերային շուկաներ, քննարկվում է գյուղտեխնիկայի պարկեր ստեղծելու հարցը, գործակվում են գյուղատնտեսական իրազեկման ու խորհրդատվության ծրագրեր: Սակայն չնայած այս միջոցառումների տեղային ու մասնակի հաջողություններին, խնդիրների մի մասը լայն առումով մնում է չլուծված համապարփակ լուծումների բացակայության պատճառով:

Նման իրավիճակում գյուղացին ունի երկու ուղի՝ զինվել համբերությամբ ու սպասել հնարավոր լուծումների պետական ու ոչ պետական մարմինների կողմից, կամ փորձել ինքնուրույն լուծել իր խնդիրները, լիովին կամ մասնակիորեն, առավելագույնս օգտվելով առկա բոլոր միջոցներից: